մի քանի տարին միանգամ յատուկ մի Եպիսկոպոս երթայ, մանաւանդ ի ներկայս նկատելով Հնդկաբնակ Հայոց անհրաժեշտ կարօտութիւնքը բարձրաստիճան հոգևոր Հովուաց հսկողութեանց՝ այցելութեանց՝ մերձաւոր խնամոց և հոգատարութեանց թէ ըստ կրօնական և բարոյական, և թէ ըստ մտաւորական և կրթական պիտոյից, արդէն Հայրապետական Կոնդակաւ պատուիրած և կարգադրած էր՝ զի Հնդկաստանի և Պարսկաստանի Առաջնորդ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննէսեանց իբրև Նուիրակն Նոր-Ջուղայ երթայ յայցելութիւն Հայոց Հնդկաստանի և շրջակայից՝ և ս հոգևորապէս մխիթարէ զժողովուրդ մեր, և կարևոր հրահանգներն ևս յանձնուած էին, սակայն ցարդ վիճակային ինչ ինչ գործեր սակաւ ինչ արգելք կանգնած էին։

Ի 24-ն ամսոյս յԱսպահանէ ստացուած մի հեռագրէ կիմանամք՝ որ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս ի 23-ն Մայիսի մեկնած է Ջուղայէն ի Հնդիկս երթալոյ համար։

Նորին Գերապատուութեան յանձնաբարուած և հրահանգ տրուած է նա և ի Պիրմանստան գտնուած Հայոց յայցելութիւն երթալոյ և կարևորները հոգալոյ համար։

Յուսամք ի Հնդկաստանէն և ի շրջակայից գոհացուցիչ և մխիթարական տեղեկութիւնք ստանալոյ, և եթէ կարևոր և ուշադրութեան արժանի լինին՝ կփութամք հաղորդել ի տեղեկութիւն համայն սիրելի Ազգայնոց մերոց։

Հետևեալը շնորհակալութեամբ կփութամք հրատարակել։

## ԿՏԱԿ
## ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Յ. ԿԷՕՔՉԱՅԵԱՆՑԻ

**Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.**

Աստրախանցի մեծաղնեայ Յովհաննէս Եղիազարեան Կեօքչայեանց՝ իւր կտակագրով՝ որ յօրինեալ է ի 19 Ապրիլի 1870 ամի՝ աւանդել է յանուն Աստրախանայ Հայոց հոգևոր Օրիորդական Դպրոցին **երկու հարիւր** րուբլի. պարոն Կեօքչայեանցի վախճանից յետոյ՝ Նորա կտակակատարը պարոն Յովհաննէս Կարապետեան Համազասպեանց՝ իւր գրութեամբ ի 13 Ապրիլի Ներկայ ամի մատոյց սոյն գումարը Դպրոցաց Հոգաբարձութեանը. Հոգաբարձական խորհրդարանը ընդունելով մեծ յարգանքով յիշեալ 200 րուբլին՝ գրեց իւր գումարաց մատենի մէջը և ստացման համար ծանոյց պարոն Համազասպեանցին՝ յայտնելով իւր գոհունակութիւնը. Սակայն սուրբ պարտականութիւն է համարում՝ այսօրինակ հանգուցեալ Յովհաննէս Կեօքչայեանցի՝ բարենպատակ կտակաւանդութիւնը Արարատ ամսագրոյ միջոցաւ հրատարակել յընդհանուր տեղեկութիւն բարենախանձ Հայազն ժողովրդոց.

Հոգաբարձուք    Աւ. քհնյ. Յովսէփ Բունիաթեանց
Սիմէօն Պօպովեանց
Գրիգոր Սողոմոնեանց.

Ի 24 Ապրիլի 1873. ՌՅԻԲ.
յԱստրախան.

## ՀԱՇԻՒ
## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՂՔԱՏԱՆՈՑԻ ՀԱՅՈՑ ՄՈՍԿՎԱՅ.

**Մուտք.**

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Յամին 1874 առ 1ն Յունվարի մնացեալ էր դրամագլուխ երկու Թագաւորական $4^0\backslash_0$ անընդհատ արդիւնաբեր տոմսակք. | | |
| Ընդ համ. 109419 . . . | 16000 | |
| Ընդ համ. 109420 . . . | 33600 | |

Արքունական գնեալ վկայագիր մի ընդ հմր. 163783 . . . 350

Հինգ արքունական $5^0\backslash_0$ պանքական տոմսակք առաջնոյ արձակման

Յանուն խորհրդարանի աղքատանոցին

Ընդ հմր. 22003 . . 100

Յանուն ներկայացուցանողի

Ընդ համարօք 50·085 և 63208 ըստ 500 ռուբլեաց . . . 1000

Ընդ համարօք 12463 և 61164 ըստ 1000 ռ. . . . . 2000

Զորեքտասան արքունական $5^0\backslash_0$ պանքական տոմսակք երկրորդի արձակման

Յանուն խորհրդարանի աղքատանոցին

Ընդ հմր. 20863 . . 500

,, 49491 . . 150

Ընդ հմրօք. 102·350 - 102358 ինն հատ ըստ 100 ռուբլեաց . . 900

Յանուն ներկայացուցանողի

Ընդ համարօք 42·180· 42·181 և 42·182 ըստ 100 ռ. . . 300

Երկու տոմսակք վիճակաւոր ներքին փոխառութեանց

Առաջնոյ կարգի 10950 № 15 . 152 75

Երկրորդ կարգի 2418 № 32 . 155

Յառևտրական դրամատան Մոսկուայի ըստ տոմսակին որ ընդ համարաւ 55·149 . . . . 500

Թղթադրամովք և մանր արծաթով . . . . . 44 63

Ծանօթ. — Բաց յայնմանէ առ 1 Յունվարի 1874 ամի մնացեալ էր յարկեղ անկելանոցին թղթադրամօք և մանրադրամօք ըստ առանձին հաշուի տոկոսաբերութեանց ընդունելոց ըստ անընդհատ արդիւնաբեր տոմսակին որ ընդ հմր. 109420—33600 ռ. արծ. և եղելոց ընդ տնօրէնութեամբ կոակահատարաց Գասպարեանի . 672 24

Բաց յայնմանէ գրեցան ի մուտս

Ընթացիկ տարւոյն, — Տոկոսիք ընկալեալք ի $4^0\backslash_0$ անընդհատ արդիւնաբեր տոմսակի որ ընդ հմր. 109·419 —16·000 ռ. արծ. ի միոյ Նոյեմբերի 1873 ամի մինչև ց1 Նոյեմբերի 1874 ամի . . . . . 640

Ծանօթ. — Ընկալեալք ի հաշիւ այնր ժամանակամիջոցի տոկոսիք ըստ անընդհատ արդիւնաբեր տոմսակին որ ընդ հմր. 109·420 — 33000 ռ. արծ. 1·344 ռուբ. գրեալ են ի մուտս ըստ տոկոսեացնհաշուոյ յայնմ դրամագլխոյ.

Ըստ գնեալ վկայագրոց 350 ռուբ. արժողութեամբ ի միոյ Նոյեմբերի 1873 ամի մինչև ց1 Նոյ. 1874 ամի. 17 50

Ըստ թղթոց պարտականութեան ի 5 պանքական $5^0\backslash_0$ դրամատոմսակաց առաջնոյ արձակման վասն 3100 ռ. արծ. ի 1 Նոյեմբ. 1873 ի ց1 Նոյեմբ. 1874 ամի . . . . 155

14· Պանքական $5^0\backslash_0$ տոմսակք երկրորդի արձակման վասն 1850 ռ. ի միոյ Սեպտեմբ. 1873 ամի մինչև ց1 Սեպտեմբերի 1874 ամի . . 92 50

Երկու տոմսակք 1 և 2 խաղարկելիք ներքին փոխառութեանց ի տարին . . . . . 10

Յառևտրական դրամատանէն Մոսկուայի վասն դրամագլխոյն 500 ռ. . 35 62

Հանգանակեալքն

Ընկեղեցւոջ . . . 159 15

Ըստ մասնի նուիրատուութեանց ընդ ձեռն անփոփոխ Անդամոյ Խորհրդարանին ի 16 անձանց . . 530

Նուիրեալքն ի գլխաւոր անդամոյ Խորհրդարանին ի Յովհաննէ Ստեփանեան Անանեան.

Ի վճար տպագրութեան կանոնագրութեան աղքատանոցին ի Հայ և ի Ռուս լեզուս, վասն կազմի քանի մի օրինակաց և առաքման յայլ և այլ տեղիս ընդ ձեռն սուրհանդակատան . 135

Քաթան վասն ծածկոցաց սեղանոյ 28 85

Յառանձին հաշուոյ տոկոսաց ընդունելոց ըստ անընդհատ արդիւնաբեր տոմսակին որ ընդ հմր. 109420 կամ՝ 33.600 ռուբլեաց ի ծածկել ծախս անկելանոցին . . . . 1306 15

Ընդ ամենն 58861 85

ԵԼՔ.

Ա. — Ընթացս տարւոյն ծախք եղեն ի պահպանութիւն անկելանոցին.

Վասն ալեր, աղի, ձիթոյ, կաղամբի, վարունգի և գետնախնձորոյ . 248 5

Մսեղէն պաշարեղինաց, խղոյ ուտեաց և ձուոց . . . 468 36

Վասն վառելափայտի $69\frac{3}{4}$ սաժէն 454 99

Մոմ ճրագուի 3 արկղ՝ 13 փութ 35 ֆունտ . . . . 88 79

Վասն ձկան, արմտեաց և մանր ծախուց ընդ ձեռն տնտեսուհւոյ . 45 8

Պտաւ վասն ծածկոցի սեղանոյ . 28 55

Վասն ջրոյ . . . . 20

Լուացարարի խնամարկելոց . 158

Վասն գեղորէից . . . 10

Վասն նուագոյ ի պէտս սրահին, աւելածութեան, կացնի և յատակավըրձնի . . . . . 5 15

Վասն մաքրելոյ զարտաքնոցս և զհեղանոցս . . . . 60

Վասն մաքրելոյ զծխնելոյզս յընթացս 1873 և 74 ամաց . . 20

Վասն մաքրելոյ և լարելոյ զժամացոյցս յընթացս նոյն ամաց . 10

Վասն շինելոյ զյատակ տախտակեայ ի ննջարանն, շինելոյ սանդուխ ի խրամն և գնելոյ զապակիս տան . . 17 15

Յընկերութիւնն ապահովութեան ընդդէմ հրդեհի վասն տան աղքատանոցին ապահովելոյ ընդ 15000 Ռ. յ12է Յուլիսի 1874 ամի մինչ ց12 Յուլիսի 1875 ամի . . . 19

Ռոճիկ քարտուղարին . . 120

Վասն տպագրութեան կանոնագրութեան անկելանոցին Հայ և Ռուս լեզուաւ, կազմի քանի մի օրինակաց, կապելոյ և առաքելոյ զայն ընդ ձեռն սուրհանդակատան. վասն գրենոյ Խորհրդարանին, մատենի արկեղ և նուիրատուութեանց, հրատարակութեանց ի լրագիրս և դիւանական ծախուց . . . . 161 15

Վասն նորոգելոյ զանցաթուղթս խնամարկելոց . . . . 7 1

Վարձ պահապանի և աղախնոյ . 114

Բ. — Վասն բարեգործութեանց արտաքոյ անկելանոցին

Միանուագ օժանդակութիւն Խալֆեանի և օտարական քհնյի. . 35

Գ. — Ամսական օժանդակութիւնք.

Ուսանողի ի համալսարանին Մոսկուայի Տէր Գասպարեանցի . . 120

Աստրախանցի Հայազգի Մուրատովի . . . . . 55

Այրեացն Ալամխանեանցի . . 240

Սարաբէկովի ի 15 Յուլիսի 110

Տէր Մալխասեանի . 120

Սախարովի . . 120

Բէգուրովի . . 120

Վասն դաստիարակութեան ի Պետրոպաւլովսկեան Դպրոցին օրիորդ Խոճայեվի . . . . 110

ՄՆԱՑ ՊԱՀԵՍՏԻՆ

Ի ՎԵՐՋ ՅՈՒՆՈՒԱՐԻ 1875 ԱՄԻ.

Երկու Թագաւորական 4% անընդհատ արդիւնաբեր տոմսակք.

Ընդ հմր. 109419 . . 16000

Ընդ հմր. 109420 . . 33600

Գնեալ արքունական վկայագիր մի ընդ հմր. 163783 . . . 350

Հինգ Թագաւորական 5% պանքական տոմսակք առաջնոյ արձակման

| | | |
|---|---|---|
| Ցանուն Խորհրդարանի անկելանոցին. | | |
| Ընդ հմրւ 22003 . . . | 100 | |
| Ցանուն Ներկայացուցանողի | | |
| Ընդ հմրօք 12463 և 61164 ըստ 1000 ռուբլ. իւրաքանչիւրն . . | 2000 | |
| Թ. 50085 և 63208 ըստ 500 ռ. իւրաքանչիւրն . . . . | 1000 | |
| Չորեքտասան թագաւորական 5% պանքական տոմսակք երկրորդի արձակման | | |
| Ցանուն Խորհրդարանի անկելանոցին. | | |
| Ընդ հմրւ 20863 . . . | 500 | |
| 49491 . . . | 150 | |
| Ընդ հմրօք 102350 – 102358 ինն հատ ըստ 100 ռ. իւրաքանչիւրն | 900 | |
| Ցանուն Ներկայացուցանողի. | | |
| Ընդ հմրօք 42180, 42181 և 42182 ըստ 100 ռուբ. . . | 300 | |
| Երկու տոմսակք Ներքին խաղարկութեանցն փոխառութեան. | | |
| Առաջնոյ կարգի 10950 № 15 . | 152 | |
| Երկրորդ կարգի 17421 № 28 . | 155 | |
| Ցառևտրական գրամատան Մոսկուայի ըստ տոմսակին որ ընդ համարաւ 55149 . . . . | 500 | |
| Թղթադրամօք և մանրադրամօք . | 68 | 22 |
| Ընդ ամենն | 55776 | 87 |
| Ծանօթ. — Բաց յայնմանէ մնաց յարկեղ աղքատանոցին թղթադրամօք և մանրադրամօք ըստ առանձինն հաշուի տեսուց ընդունելոց ըստ անընդհատ արդիւնաբեր տոմսակին 33600 ռ. . | 710 | 9 |
| Ընդ ամենն | 58861 | 85 |

Մոսկվայի Հայոց Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարանի ի 1874 անցեալ թուականին ունեցած տարեկան ամբողջ հաշիւը հրատարակելէ զկնի՝ որ Մոսկվայի Հայոց օրինադրեալ Ընդհ. Ժողովոյ մէջ 18ն Ապրիլի տարւոյս քննուած և վաւերացած է, արժան կհամարիմք յիշեալ Խորհրդարանի ընդ հաշուեկշռոյն առ Վեհ. Հայրապետ ներկայացուցած Յայտարարութենէն հետևեալ տեղեկութիւնքը քաղել և հրատարակել, զի

1, Բաց ի հաշուոյն մէջ յակնէ յանուանէ յիշուած և արտաքոյ Աղքատանոցին բնակեալ նպաստընկալ այրի և այլ անձինքներէն, 1874 տարւոյն մէջ Աղքատանոցին մէջ պատսպարուած և խնամք ընդունած են ինն անձինք, և նոցա սնընդեան համար 985 ռուբլի 5 կոպ. ծախս եղած է՝ առանց հաշուելոյ Աղքատանոցի շինուածքի (տան) համար հարկ եղած 789 ռուբ. 8 կոպ. քարտուղարի և տպագրութեանց ելն համար եղած 281 ռուբ. 15 կոպ. պանդուխտներու ի նպաստ ընծեռուած 35 րբլ. և Աղքատանոցէն դուրս մատակարարուած 995 րբլ. ծախքերը, որք բոլորը ի միասին կգումարեն 3085 րբլ. 28 կոպ. և

2, Ըստ տրամադրութեան կանոնադրութեան Աղքատանոցին՝ ժամանակները լրացած լինելով՝ տեղական Հայոց ժողովրդական Ընդհ. Ժողովոյ մէջ միաձայնութեամբ՝ Խորհրդարանի գլխաւոր Անդամ ընտրուած է դարձեալ Վսեմ. Յովհաննէս Սահփ. Յօնաննեանց, իսկ Անդամ ընտրուած է Մեծ. Մելքոն Գասպարեան փանեանց՝ և "Նախագահ" մինն յեկեղեցականաց տեղւոյն՝ Յարութիւն Ա.քհ. Կէօրչէյեանց, որ ի նոյն աւուրս վախճանեալ լինելով՝ մի ուրիշը պիտի ընտրուի ի տեղի նորա: